

**ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԺՇԿԱԿԱՆ ԲՈՒՀՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ
ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՈՐՊԵՍ ԱԴԱՊՏԱՑԻԱՅԻ
ԳՈՐԾԻՔ**

Մնեգիրյովա Լ. Վ., Գրիգորյան Գ. Ռ., Սարգսյան Ա. Հ.

Հեղինակների կողմից ուսումնասիրվել է բուհի ուսումնական միջավայրում էլեկտրոնային ուսուցման տարր հանդիսացող համակարգչային թեստավորման նպատակահարմարությունը ադապտացման փուլում:

Հետազոտության ընթացքում պարզվել է, որ ադապտացման ընթացքում ուսանողները գերադասում են համակարգչային թեստավորումը գիտելիքների ստուգման այլ ձևերից: Բուհի ուսումնական միջավայրին դժվարությամբ ադապտացվող առաջինկուրսեցիները ավելի շատ կողմ են գիտելիքների ստուգման համակարգչային թեստավորման տարբերակին: Համակարգչային թեստավորումը ադապտացման փուլում մեծապես օգնում է սովորողների հուզական լարվածության նվազմանը, փոքրագույնի է հասցնում հոգեբանական անհարմարավետությունը, չեզոքացնում է ադապտացման գործընթացի բացասական երևույթները, օրինակ՝ առաջադիմության նվազումը:

Բարձրկուրսեցիների մոտ դիտվում է համակարգչային թեստավորման նկատմամբ հետաքրքրության նվազում: Հեղինակների կարծիքով՝ նշված փաստը վկայում է այն մասին, որ ադապտացման գործընթացի ավարտից հետո գիտելիքների ստուգման անշփում ձևը կորցնում է իր արդիականությունը՝ ուսանողների հուզական կայունության ձեռքբերման շնորհիվ:

Բանալի բառեր. բարձրագույն կրթություն, ադապտացիա, էլեկտրոնային ուսուցում, համակարգչային թեստավորում:

Նախաբան: Ներկայումս էլեկտրոնային ուսուցումը իր հաստատուն դիրքն է գրավում բարձրագույն ուսումնական հաստատությունների կրթական հարթակում [1,3]: Չնայած անընդհատ չդադարող քննարկումներին՝ էլեկտրոնային ուսուցումը համալսարանական կրթական միջավայրում [4] լայն կիրառություն է ստացել իր անհերքելի առավելությունների շնորհիվ [2, 5-8].

- ուսանողների անհատական ուսուցման ներուժ,
- ուսանողների արդյունավետ ինքնապատրաստման ապահովում,
- ուսումնական նյութերի հասանելիություն,
- ուսուցման խնդիրների վերացման հնարավորություն,
- արդյունավետ ինքնաստուգում:

Ուստի անհրաժեշտություն է առաջանում զարգացնելու եղած մոտեցումները և մշակելու նոր միջոցներ՝ ապահովելու համար էլեկրոնային ուսուցման արդյունավետությունը [5-8]:

Նշենք, որ էլեկտրոնային ուսուցման տարբեր տարրեր և՛ նպատակահարմար են, և՛ անհրաժեշտ ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի պարագայում, մասնավորաբար՝ ուսանողների գիտելիքների ստուգումը համակարգչային թեստավորման միջոցով: Ուստի կարևորություն են ստանում նաև էլեկտրոնային ուսուցման տարբեր տարրերի արդյունավետ կիրառման հարցերը [4-8]:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Այս հետազոտության նպատակն է ուսումնասիրել բուհի կրթական միջավայրում ուսանողների էլեկտրոնային ուսուցումը՝ որպես ուսուցման բաղադրիչ տարր, ինչպես նաև դիտարկել ադապտացման փուլում համակարգչային թեստավորման արդյունավետությունը:

Հետազոտության խնդիրները.

- 1) ուսումնասիրել ուսանողների ադապտացման դրսևորման սուբյեկտիվ ցուցանիշը (տազնապայնության աստիճանը),
- 2) ադապտացման փուլում և նրա ավարտից հետո, որպես գիտելիքների ստուգման ձև, անցկացնել համակարգչային թեստավորման գնահատում,
- 3) վերլուծել և համեմատել ադապտացիայի դրսևորման ցուցանիշը և համակարգչային թեստավորման սուբյեկտիվ գնահատականը:

Հետազոտության նյութերը: Ռուսաստանի Դաշնության Կուրսկի քաղաքի բժշկական համալսարանում ընտրվել է «Բուժական գործ» մասնագիտությամբ սովորող 87 ուսանող, որոնցից 54-ը առաջին կուրսեցիներ են և արդեն 3 ամիս ուսումնառում են, իսկ 33-ը վեցերորդ

կուրսում սովորողներ են: Թիրախավորվել են առաջին և ավարտական կուրսի ուսանողները:

Հետազոտության մեթոդները:

- 1) Փորձարկվողների տազնապայնության աստիճանը Սպիլբերգեր-Խանինի տազնապի սանդղակի միջոցով գնահատելու համար փորձարկողը պետք է որոշի կոնկրետ պահի տազնապայնության աստիճանը (ռեակտիվ տազնապայնությունը՝ որպես վիճակ) և անձնային տազնապայնությունը (որպես մարդու հաստատուն բնութագիր):

Ցուցանիշները մեկնաբանելիս օգտագործվել են հետևյալ մոտավոր տազնապայնության գնահատականները.

- մինչև 30 բալ - ցածր,
 - 31 բալից մինչև 44 բալ – միջին,
 - 45 բալ և ավելին – բարձր,
- 2) Անձնական հարցաթերթիկներով, որոնք պարունակում են 14 հարց, անցկացվել են գիտելիքների տարբեր ստուգումներ և սուբյեկտիվ գնահատում:
 - 3) Վիճակագրական տվյալների մշակումը կատարվել է հետևյալ մեթոդներով.
 - նկարագրական վիճակագրությունը թույլ է տալիս ընդհարացնել սկզբնական արդյունքները, որոնք ստացվել են ուսումնասիրության կամ փորձի ընթացքում:


Ադապտացիայի փուլի արդյունքները: Ադապտացիայի փուլում և նրա ավարտից հետո, որպես ուսանողների գիտելիքների ստուգման ձև, համակարգչային թեստավորմամբ սուբյեկտիվ գնահատականի վերլուծություն է արվել:

Ադապտացիայի փուլում առաջինկուրսեցիների 39%-ը առավելություն է տվել գիտելիքների ստուգման համակարգչային թեստավորմանը, քան ստուգման այլ տարբերակների: Ուսանողները իրենց բացատրությունն են տվել ծանրակշիռ առաջնահերթությունների վերաբերյալ՝ նշելով համակարգչային թեստավորման հետևյալ առավելությունները.

- դասախոսի հետ անձնական շփման բացակայությունը,
- համակարգչի ինտերֆեյսի իմացությունը,
- թեստային տարբերակով քննության հանձնման փորձը,
- բազմաթիվ տարբերակներից ճիշտ պատասխան ընտրելու հնարավորությունը,

- հարցի ճիշտ ձևակերպման վրա կենտրոնանալու և անհրաժեշտության դեպքում ոչ ճիշտ պատասխանին կրկին անդրադառնալու հնարավորությունը,
- գիտելիքների ստուգման գնահատման օբյեկտիվությունը,
- հուզական լարվածության նվազեցումը:

Պետք է նշել, որ առաջին կուրսեցիները, որոնք ավելի դժվար են ադապտացվում բուհի կրթական միջավայրին, ավելի շատ կողմ են գիտելիքների ստուգման թեստային տարբերակին: Սովորողների ավելի քան 58%-ը առավելությունը տալիս է գիտելիքների ստուգման նշված տարբերակին, ըստ իրենց դասի ժամանակ բանավոր հարցման ընթացքում դասախոսի և համակուրսեցիների հետ շփումը բերում է հուզական լարվածության բարձրացմանը, որն էլ իր հերթին խանգարում է կենտրոնանալ ուսումնական նյութի վրա և ցույց տալ իրական գիտելիքները: Հարցման արդյունքում, որն իրականացվել է կրթական միջավայրին հարմարված ուսանողների շրջանում, միայն 34%-ն է կարծում, որ համակարգչային թեստավորումը նպատակահարմար է և օբյեկտիվ (նկ. 1):



Նկ. 1. Բժշկական բուհի բուժական ֆակուլտետի ուսանողների՝ համակարգչային թեստավորմամբ գիտելիքների ստուգման մեթոդի վերաբերյալ օբյեկտիվ գնահատականները:

Ադապտացիայի ժամանակահատվածի ավարտից հետո համակարգչային թեստավորման միջոցով ուսանողի գիտելիքների

ստուգման օբյեկտիվ գնահատականը զգալիորեն փոփոխվում է: Այսպիսով, հարցմանը մասնակցող վեցերորդկուրսեցիների միայն 6%-ն է առավելությունը տալիս համակարգչային թեստավորման միջոցով ուսանողների գիտելիքների ստուգմանը (առաջինկուրսեցիների 39%-ի հետ համեմատած): Շրջանավարտները կարծում են, որ համակարգչային թեստավորումը գիտելիքների ստուգման բավարար չափով օբյեկտիվ տարբերակ չէ, քանի որ, իրենց կարծիքով, ավելորդ հարցերի առկայությունը նպաստում է ճիշտ պատասխանը գուշակելուն, և ուսումնական նյութի բովանդակությունը սահմանափակ է:

Հարցմանը մասնակցած վեցերորդկուրսեցիների 79%-ը հնարավորության դեպքում գիտելիքների ստուգման ձևերից կբացառեր համակարգչային թեստավորումը և առավելությունը կտար գրատախտակի մոտ բանավոր հարցմանը, քանի որ դասախոսի հետ ուսումնական նյութը քննարկելը ուսանողին հնարավորություն է տալիս ուղղել սխալները, զարգացնել տրամաբանական մտածողության ունակությունները, համակարգել ուսումնական նյութերը, ապահովել սոցիալական և մասնագիտական փոխազդեցությունը:

Եզրահանգում: Մեր կարծիքով բարձրկուրսեցիների հետաքրքրության նվազումը համակարգչային թեստավորման նկատմամբ վկայում է այն բանի մասին, որ ադապտացիայի պրոցեսի ավարտից հետո ստուգման անշփում ձևը կորցնում է իր արդիականությունը՝ մասնավորապես ուսանողների հուզական կայունության ձեռքբերման շնորհիվ:

Համակարգչային թեստավորումը ադապտացիայի փուլում կարող է նաև զգալիորեն օգնել ուսանողների հուզական լարվածության նվազմանը, հոգեբանական անհանգստությունը նվազագույնի հասցնելուն, ադապտացման գործընթացի բացասական դրսևորումների չեզոքացմանը, օրինակ՝ առաջադիմության նվազմանը:

Այսպիսով, այս հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս խոսել համալսարանում ուսանողների ուսուցման տարբեր փուլերում գիտելիքների ստուգման ձևերի մտածված և հավասարակշռված մոտեցումն անհրաժեշտության մասին:

ИЗУЧЕНИЕ ЭФФЕКТИВНОСТИ ЭЛЕКТРОННОГО ОБУЧЕНИЯ КАК ИНСТРУМЕНТА АДАПТАЦИИ СТУДЕНТОВ-ПЕРВОКУРСНИКОВ МЕДИЦИНСКОГО ВУЗА

Снегирева Л. В., Григорян Г. Р., Саргсян А. А.

Авторами рассмотрен вопрос целесообразности использования компьютерного тестирования, как элемента электронного обучения, на этапе адаптации студентов-первокурсников к образовательной среде вуза и по его окончании.

В процессе исследования авторами выявлена высокая степень востребованности учащимися компьютерного тестирования на этапе адаптации, в сравнении с другими формами контроля знаний. Первокурсники, испытывающие наибольшие трудности с адаптацией к образовательной среде вуза, наиболее активно выступают за применение компьютерного тестирования для оценки знаний. Компьютерное тестирование может оказать существенную помощь на этапе адаптации в снижении эмоционального напряжения обучаемых, минимизировать психологический дискомфорт, нивелировать негативные проявления процесса адаптации, например, снижение успеваемости.

У старшекурсников выявлено снижение интереса к компьютерному тестированию. На взгляд авторов, указанный факт является свидетельством того, что по окончании процесса адаптации бесконтактные формы контроля теряют свою актуальность, в частности, в силу обретения учащимися эмоциональной стабильности.

Ключевые слова: высшее образование, адаптация, электронное обучение, компьютерное тестирование.

STUDY OF THE EFFICIENCY OF E-LEARNING AS A TOOL FOR ADAPTATION OF FRESHMEN STUDENTS OF MEDICAL UNIVERSITY

Snegireva L. V., Grigoryan G. R., Sargsyan A. H.

It is discussed by the authors the issue of the expediency of using computer testing as an element of e-learning at the stage of adaptation of first-year students to the educational environment of the university and after the end of this stage.

In the course of the research, the authors revealed a high degree of demand for computer testing by students at the stage of adaptation, in

comparison with other forms of knowledge control. Freshmen, who experience the greatest difficulties in adapting to the educational environment of the university, mostly prefer using computer testing to assess knowledge. Computer testing can provide significant assistance at the stage of adaptation in reducing the emotional stress of trainees, minimizing psychological discomfort, and neutralizing the negative manifestations of the adaptation process, for example, a decline in academic performance.

The senior students showed a decrease in interest in computer testing. In the opinion of the authors, this fact is evidence that at the end of the adaptation process, non-contact forms of control lose their relevance, in particular, due to the fact that students gain emotional stability.

Keywords: higher education, adaptation, e-learning, computer testing.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Рышкова А. В. Электронные портфолио обучающихся как инструмент самостоятельной работы студентов по физике. // Подготовка медицинских кадров и цифровая образовательная среда. Материалы междунар. науч.-практ. конф., посвященной 84-й годовщине КГМУ. 2019. С. 517-520.
2. Снегирева Л. В. Современное состояние проблемы дидактического обеспечения электронного обучения в высшей школе.// Балтийский гуманитарный журнал. 2017. Т. 6. № 4 (21). С. 398-401.
3. Снегирева Л. В. Формирование основных структурных компонентов математической компетентности студентов медицинского вуза в процессе электронного обучения.// Современные наукоёмкие технологии. 2016. № 8-2. С. 363-367.
4. Фетисова Е. В. Элементы компьютерных технологий в преподавании математики студентам медицинского вуза. / Е. В. Фетисова, Т. А. Новичкова, Л. В. Снегирева // В сборнике: Подготовка медицинских кадров и цифровая образовательная среда материалы Международной научно-практической конференции, посвященной 84-й годовщине КГМУ. 2019. С. 611-615.
5. Фролов И. Н. E-learning как форма организации учебного процесса в XXI веке// Информатика и образование. 2009. №2. С. 227-229.

6. Plashchevaya E. V. Use of electronic information and educational environment in the process of teaching physics to medical students//Colloquium-journal. 2020. № 11-5 (63). P. 49-52.
7. Baharum A. et al. Evaluating the localization for E-learning website: case study in Universiti Malaysia Sabah // 2017 International Conference on Platform Technology and Service (PlatCon). IEEE, 2017. P. 1-6.
8. Xu D., Jaggars, S. S. Examining the effectiveness of online learning within a community college system: An instrumental variable approach. Unpublished manuscript. New York: Columbia University, Teachers College, Community College Research Center. 2012.

Տեղեկություններ հեղինակների մասին

Մնեգհրջյուլա Լ. Վ. – կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Կուրսկի պետական բժշկական համալսարան

Էլ. փոստ Snegly1@gmail.com

Գրիգորյան Գ. Ռ. – ֆիզմաթ գիտությունների թեկնածու

Կուրսկի պետական բժշկական համալսարան

Էլ. փոստ Gohar_grigoryan@bk.ru

Մարգարյան Ա. Հ. – ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ

Շիրակի պետական համալսարան, Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն

Էլ. փոստ armenuhis@mail.ru

Տրվել է խմբագրություն՝ 29.10.2021

Գրախոսվել է՝ 18.02.2022